Անվանակոչում

ԵՊՀ իրավաբանական Ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողների համար գիտելիքի, գրի, դպրության տոնական օրն իր մեջ կրկնակի խորհուրդ ուներ: **Լարանը, որտեղ ոտք դրեցին առաջին կուրսեցիները, անվանակոչվեց ԼՂՀ 1-ին աստիճանի «Մարտական խաչ», «Մարտական ծառայություն», ՀՀ «Արիության» ճեղալներով պարգեւատրված Հայոտ Արշակյանի անունով:** Անվանակոչման արարողությանը մասնակցում էին Հայոտի մանկության ու մարտական ընկերները, հերոսի հայրը, կինը, աղջիկը, ուսանողներ, դասախոսներ, զինվորականներ, ԵԿՄ անդամներ:

Ավագ լեյտենանտ, վաշտի հրամանատար Հ. Արշակյանը 1993թ. իր մասնակցությունն է բերել Մարտակերտի ավելի քան 10 գյուղերի ազատագրմանը: Զոհվել է 1994թ. հունվարի 9-ին, Մատաղիսի բարձունքում ընթացող մարտերի ժամանակ:

...Լարանի պատին Հայոտ Արշակյանի գեղեցիկ մեծադիր լուսանկարն է: **Հուշ-ցերեկույթը վարում է Թաթուլ Կրպեյանի դուստրը՝ Ասպրամ Կրպեյանը:** Հուզված է: «Ուսանել նվիրական մի հայորդու անվան լարանում, ով հանուն Հայաստան եւ Արցախ աշխարհի զոհաբերեց ամենաթանկը՝ կյանքը, ձեզ համար, սիրելի ուսանողներ, պատիվ է եւ մեծ պատասխանատվություն»,- ասում է Ասպրամը:

Իրավագիտության Ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը նույնպես հուզված էր. «Հայոտ Արշակյանը մեր Ֆակուլտետի ուսանողական նստարանից է գնացել ռազմի դաշտ: Լարանը Հայոտ Արշակյանի անունով կոչելու գաղափարը ծագեց վերջերս կայացած հուշ-ցերեկույթի ժամանակ: Էջմիածնի քաղաքապետ Կ. Գրիգորյանի կողմից, որը, ի դեպ, նույնպես մեր Ֆակուլտետի սանն է եղել, եղավ այս առաջարկը: Այնուհետեւ կարճ ժամանակում, ինչպես տեսնում եք, քաղաքապետի ջանքերով լարանը վերանորոգվեց եւ այսօր մաքուր, լուսավոր այս տեսքով է դիմավորում ձեզ: Պատահական չէ, որ անվանակոչումը մենք տրամադրում ենք առաջին կուրսեցիներին: Ձեր սովորելու ընթացքում հավերժ երիտասարդ այս հայացքները ձեր ապրելակերպի, ձեր մտածելակերպի ձեւավորման գործում, անշուշտ, մեծ դեր կունենան, եւ հայրենիք, կյանք, հասարակություն բառերը այլ արժեք ու իմաստ կստանան ձեր կյանքում»:

Էջմիածնի քաղաքապետ Կ. Գրիգորյանը, շնորհավորելով ուսանողներին, ասաց. «Մի քանի տարի առաջ ես այս լարանում քննության էի պատրաստվում: Այսօր այն անվանակոչվում է Արցախյան պատերազմի հերոս Հայոտ Արշակյանի անունով: Որպես ուսանող՝ դուք կհասկանաք, թե որքան դժվար է թողնել ուսանողական նստարանը, ուսանողական կյանքը, ծնողներին, ընտանիքը եւ մեկնել ռազմի դաշտ: Դրա համար հարկավոր է ոգի եւ անկաշառ հայրենասիրություն: Հայոտը գնաց՝ քաջ գիտակցելով, որ եթե թշնամուն ճակատում չկանգնեցնես, ստիպված ես լինելու կանգնեցնել տան շեմին»:

Իսկ **հերոսի հայրը՝ Կորյուն Արշակյանը,** դիմելով ուսանողներին, ասաց. «Իմ որդին միշտ ձգտել է դեպի լավը, գեղեցիկը, կատարյալը, ձգտել է նվաճել բարձունքներ: Ու նվաճեց»...

- Հայոտը խոնարհ հերոս էր: Ես բախտ եմ ունեցել նրան ճանաչելու, նրա հետ կիսելու իմ հացը: Ամբողջ պատերազմի ընթացքում համեստորեն, լռելյայն նա իր գործն էր անում: Արժանի եղեք այն ժառանգությանը, որը ձեզ թողեցին Հայոտն ու նրա մարտական ընկերները: Փառք նրանց ծնողներին, այն մանկավարժներին, ովքեր կրթել, դաստիարակել են Հայոտ Արշակյանի նման տղաներ,- ասաց ՊՆ Տ եւ ՀԿ **վարչության պետի տեղակալ Ֆելիքս Պողոսյանը:**

Ավանդույթի համաձայն՝ լարանի անվանակոչությունից հետո մասնակիցները ծաղիկներ դրեցին Արցախյան ազատամարտում զոհված համալսարանականների հիշատակին կառուցված հուշարձան-խաչքարին:

ԳՆԵԼ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Լուսանկարները՝ ՀՈՎՀ ԱՐՄԵՆԱԿՅԱՆԻ